ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

16 փետրվարի 2015 թվականի N 26-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 120-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2009 թ. դեկտեմբերի 14-ի № 120-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի կանոնակարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) կանոնակարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Հանձնաժողովը կազմավորվում է Գործակալության պետի ներկայացմամբ՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի հրամանով:

Հանձնաժողովի կազմը բաղկացած է 15 անդամից, այդ թվում՝ վեցը Գործակալության և մեկական անդամ հավաքագրվում են Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի Ընդերքի տրամադրման գործակալության, Ընդերքի պետական տեսչության, Ընդերքի վարչության և <<Հանրապետական երկրաբանական ֆոնդ>> պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ առանձնացած և կառուցվածքային ստորաբաժանումներ) հաստիքային աշխատակիցներից և հինգը անկախ փորձագետներից:

Գործակալության պետը, Գործակալության պետի տեղակալը, Գործակալության Հանքավայրերի արդյունաբերական գնահատման, Օգտակար հանածոների պաշարների և Օգտակար հանածոների պաշարների շարժի բաժինների պետերը և Գործակալության

գլխավոր (կամ առաջատար) մասնագետը Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

Առանձնացված և կառուցվածքային ստորաբաժանումների հաստիքային աշխատակիցները Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարի, իսկ անկախ փորձագետները՝ Գործակալության պետի ներկայացմամբ:>>,

2) կանոնակարգի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<11. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

- նախապես Գործակալությունում ծանոթանալու Հանձնաժողովի նիստում քննարկվելիք նյութերի ամբողջական փաթեթի հետ,

- մասնակցելու Գործակալության պետական ընդերքաբանական փորձաքննությանը ներկայացված նյութերի աշխատանքային քննարկումներին,

- աշխատանքային քննարկումների ժամանակ և Հանձնաժողովի նիստերում գրավոր կամ բանավոր ներկայացնելու իրենց տեսակետները փորձաքննվող նյութերի վերաբերյալ:>>,

3) կանոնակարգը լրացնել նոր՝ 12-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

<<12. Հանձնաժողովի անդամները պարտավոր են.

- ապահովել նյութերի պետական ընդերքաբանական փորձաքննության ընթացքում ձեռք բերված տեղեկատվության խորհրդապահությունը,

- ապահովել պետական ընդերքաբանական փորձաքննության ներկայացված նյութերի վերաբերյալ իրենց օբյեկտիվ և անաչառ մոտեցումները:>>:

2. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի պետական գրանցումը ՀՀ արդարադատության նախարարությունում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ